

ՈՒՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիրը ստորագրվել է 2000թ. սեպտեմբերի 25-ին, Մոսկվա քաղաքում:

Ստորագրող կողմերն են ՀՀ առողջապահության նախարարությունը և Ռուսաստանի Դաշնության նախարարությունը:

Համագործակցության շրջանակներն են՝

- բնակչության առողջության առաջնային և մասնագիտական բժշկական օգնության ցուցաբերում մեծահասակ և մանկահասակ բնակչությանը,
- կանխարգելիչ բժշկություն և շրջակա միջավայրի պաշտպանություն,
- դեղաբանություն և բժշկական սարքավորումներ, այդ թվում՝ արտադրություն,
- սանիտար-առողջարանային բուժում և վերականգնում,
- գիտական և բժշկական կադրերի պատրաստում,
- գիտական մշակումների համատեղ իրագործում,
- առողջապահության մեջ համակարգչային տեղեկատվության համակարգերի մշակում և ներդրում,
- բնակչության բժշկական ապահովագրում,
- առողջապահության համակարգի վերակառուցման մեջ առաջնայնության մշակումը,
- բժշկական վիճակագրություն,
- արտակարգ իրավիճակների բժշկասանիտարական հետևանքների կանխում և վերացում,
- հրատապ տեղեկության փոխանակում: